## ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՀԱՅՑ· ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԷՆ ԱՒԱԳ ՔՀՆՅ· ԱՇՃԵԱՆ, ՀՈՎԻՒ

**ST. LEON'S ARMENIAN CHURCH**

12-61 Saddle River Road • Fair Lawn, N. J. 07410

**REV. ARTEN ASHJIAN, Pastor**

Telephones: (Code 201)

791-1583 – Rectory – 791-2862

Church – 791-2862




21 Փետրվար 1974

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Իմ նախագահութեամբ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ կիրակի, փետր. 3ին: Ծխական Խորհուրդի ինն անդամներէն չորսին պաշտօնավարութեան շրջանը լրացած ըլլալով, երկպատիկ ցանկի վրայէն գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան հետեւեալները.–

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ՝ 48 քուէ

ԺԱՔ ԹՈՍՈՒՆԵԱՆ՝ 47 քուէ

ՄԱՐԹԻՆ ԳԱԲՈՅԵԱՆ՝ 38 քուէ

ԿԷՐԻ ՔԻՒԼՀԱՆՃԵԱՆ՝ 30 քուէ

Քուէարկութեան մասնակցած էին 55 անդամներ:

Այսու կը խնդրենք որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալներու ընտրութիւնը, որպէսզի մօտ օրէն հնարաւոր ըլլայ կատարել ներկայ տարեշրջանի դիւանի պաշտօնեաներու ընտրութիւնը:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ

որդիական յարգանօք եւ սիրով՝

Արտէն Ա. Քհնյ. Աշճեան